ստանալու: Իսկ այնօր պատրաստել էին ի պատիւ մեզ: Իսկ նրանց ծուլութեան եւ դանդաղկոտութեան պատճառը պէտք էր որոնել բոլորովին այլ հակումների մէջ: Ես նրանց անշարժ դէմքերի վրայ կարդում էի այդ հակումները, թէ «ինչո՞ւ մարդ պէտք է կարօտ լինէր ուտելու, միթէ աւելի լաւ չէ՞ր, որ նա ազատ լինէր այդ հոգսից, որ աւելի ժամանակ ունենար անձնատուր լինելու աղօթքների եւ աստուծոյ փառաբանութեանը: Եւ իրաւ, նրանք ուտում էին օրը մի անգամ միայն, այն եւս պահոց կերակուրներ, իսկ տօն օրերում՝ ուտեաց կերակուրներ, բայց միս՝ երբեք: Մեզ յետոյ ասացին, որ սեղանատան մէջ մեր այնօր տեսածը ամբողջ միաբանութիւնը չէր: Նրանցից շատերը չէին եկել ճաշելու. ոմանք գալիս են սեղանատուն ճաշելու երկու օրը մի անգամ, ոմանք՝ երեք օրը մի անգամ, ոմանք՝ շաբաթը մի անգամ, ոմանք ամենեւին չեն գալիս եւ իրանց բացակայ ճգնարաններում կերակրւում են միայն բոյսերով: Այդ հալող, մաշող ծոմապահութիւնն էր պատճառը, որ այդ թշոառ հասարակութեան մէջ ես չէի տեսնում ոչ մի առողջ մարդ. բոլորը հիւանդոտ, նիհար, ցամաքած, գունաթափ էակներ էին: Նրանց մէջ չկար ոչ կաթոլիկ աբեղայի հաստ փորը եւ ոչ նրա պարարտ երեսի անբնական կարմրութիւնը :

Սեղանատան մէջ ուրիշ ձայն չէր լսւում, բացի աբեղաներից մէկի ընթերցանութեան ձայնը, որ վերեւում, պատի վրայ շինուած վանդակապատի մէջ բարձրացած, նստել էր եւ, ճաշի բոլոր տեւողութեան ժամանակ, կարդում էր սուրբերի վարքից զանազան պատմութիւններ: Բոլորի ուշադրութիւնը դարձրած էր դէպի այն կողմը: Բայց ես չէի լսում, որովհետեւ գրաբար ընթերցանութիւնից ոչինչ չէի հասկանում: Իմ ուշադրութիւնը գրաւել էին սեղանի պղնձեայ անօթները: Դրանք միատեսակ եւ միաձեւ չէին. մէկը մեծ էր, մէկը փոքր էր, եւ բոլորի վրայ կային հայոց տառերով արձանագրութիւններ: Երեւում էր, որ ժամանակների ընթացքում այդ անօթները զանազան երկրներից ուխտաւորները բերել էին իրանց հետ եւ, իբրեւ յիշատակ, իրանց մեղքերի. թողութեան համար՝ ընծայել էին վանքին: Իւրաքանչիւրի վրայ քանդակած էին նոիրողի, նրա ծնողաց, նրա որդիների անունները: Նրանցից մի քանիսը շատ գեղեցիկ էին եւ մի քանի դարերի հնութիւն ունէին:

— Այդ զանազան երկրների հին արհեստի արդիւնքը, — ասաց ինձ յետոյ Ասլանը, — կարող է մի լաւ թանգարանի զարդը լինել:

Բոլորի զգեստը միաձեւ էր եւ միագոյն եւ պատրաստուած էր միեւնոյն նիւթերից: Մի թել անգամ բամբակից կամ մետաքսից չկար նրանց հագուստների մէջ, ամբողջապէս կարուած էին մազէ կոշտ գործուածքներից: Նրանց հագուստը, որպէս երեւում էր, ոչ այնքան մարմինը պահպանելու